

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/7

14 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Պարզև Շահբազյանի 17.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 201 որոշման դեմ:

Քաղաքացի Պարզև Շահբազյանի գանգատում բերված փաստարկները.

Պարզև Շահբազյանը (այսուհետ նաև գանգատաբեր) նշում է, որ Կենտրոնի հարկային տեսչության պետի կողմից 17.02.2015թ. կայացվել է թիվ 201 որոշումը, որի համաձայն 12.02.2015թ-ի դրությամբ իր չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 843.196 դրամ:

Նշված որոշման մեջ արտացոլված տվյալները չեն համապատասխանում իրականությանը, այն կայացվել է չճշտված տեղեկությունների հիման վրա և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

Գանգատաբերը նշում է, որ իր կողմից Կրաստանի հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել «Honda CRV» մակնիշի 2003 թ-ի վթարված ավտոմեքենա (այսուհետ՝ Ավտոմեքենա):

Համաձայն ներմուծման ժամանակ կազմված հայտարարագրի ավտոմեքենայի մաքսային արժեքը կազմել է 865.599 դրամ: Ընդ որում պետք է նշել, որ ավտոմեքենան վթարված լինելու վերաբերյալ նշված է նաև մաքսային հայտարարագրում: Բացի դրանից Ավտոմեքենայի վթարվածության աստիճանը, ավտոմեքենայի նորմալ շահագործողական վիճակի բերելու համար անհրաժեշտ մասերի ու աշխատանքների շուկայական արժեքը պարզելու համար Հայաստանի Հանրապետության «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվել է փորձաքննություն:

Կատարված փորձաքննության արդյունքում կազմվել է Հմ 04761410 փորձագետի եզրակացությունը, որի համաձայն Ավտոմեքենայի վնասվածքների և դրանց պատճառով առաջացած խախտումների հետևանքով, այդ ավտոմեքենայի վերականգման, նորմալ շահագործողական վիճակի բերելու համար ծախսերի չափն՝ արժեքային արտահայտությամբ, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել 2.085.200 /երկու միլիոն ութսունհինգ հազար երկու հարյուր/ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանեկան կարիքները հոգալու համար անհրաժեշտ էր շտապ հայթհայթել գումար գանգատաբերի կողմից Ավտոմեքենան, համաձայն 05.05.2014 թ-ին կնքված Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի, վաճառվել է Վահագն Սիմոնյանին 800.000 դրամով: Սակայն փաստացի գնված մեքենայի դիմաց Վահագն Սիմոնյանը վճարել է 900.000 դրամ: Մնացած գումարը նախատեսվել է Ավտոմեքենայի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարելու համար:

Որոշ ժամանակ անցնելուց հետո Կենտրոնի հարկային տեսչությունից ստացվել է գրություն այն մասին, որ վաճառված Ավտոմեքենան հանդիսացել է մեկ տարվա ընթացքում վաճառված երկրորդ մեքենան, հետևապես համաձայն Ավելացված

արժեքի հարկի մասին օրենքի անհրաժեշտ է հարկային տեսչություն ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկ և վճարել վաճառքից առաջացած ԱԱՀ-ի գումարը:

Հետևելով Կենտրոնի հարկային տեսչության առաջարկին գանգատաբերի կողմից ներկայացվել է ԱԱՀ-ի հաշվարկ, որում արտացոլվել է վաճառված Ավտոմեքենայից առաջացած ԱԱՀ-ի գումարը: Սակայն ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը հիմք չի ընդունվել, պատճառանաբերով, որ իբրև Ավտոմեքենայի գնորդ Վահագն Սիմոնյանը տվել է հայտարարություն, որ Ավտոմեքենան ինձանից գնել է 9000 ԱՄՆ դոլարով: Ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված տվյալները չընդունվելու վերաբերյալ Կենտրոնի հարկային տեսչությունը տեղեկացրել է 12.01.2015թ. գրությամբ:

Համաձայն չլինելով Կենտրոնի հարկային տեսչության 12.01.2015 թ-ի գրության հետ գանգատաբերի կողմից տեսչության պետի անունով 20.01.2015թ. ներկայացվել են առարկություններ, որին սակայն մինչև օրս չի պատասխանվել:

Այդ ամենից հետո փոստով ստացվել է Կենտրոնի հարկային տեսչության պետի 17.02.2015թ. թիվ 201 որոշումը՝ գանգատաբերից 843.169 դրամ գանձելու վերաբերյալ: Ընդ որում որոշման մեջ նշված է, որ ԱԱՀ-ի պարտավորությունը առաջացել է 2014թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով, ինչը իրականությանը չի համապատասխանում, քանի որ նշված ժամանակահատվածի համար իմ կողմից ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված են Ավտոմեքենայի իրական վաճառքի գնից բխող պարտավորությունը:

Գանգատաբերը պնդում է, որ «Honda CRV» մակնիշի 2003թ. վթարված ավտոմեքենան Վահագն Սիմոնյանին վաճառել են 900.000 դրամով, այդ մասին են վկայում վերը նշված ապացույցները, ինչպես նաև Ավտոմեքենայի գնորդ Վահագն Սիմոնյանի գրավոր հայտարարությունը (կցվում է սույն գանգատին): Այսպես, Վահագն Սիմոնյանը տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության առաջին կարգի մասնագետ Ա.Պետրոսյանին իր տված հայտարարությունում շփոթմամբ նշել է, որ Ավտոմեքենան գնել է 9000 ԱՄՆ դոլարով, սակայն իրականում այն գնել է 900.000 դրամով:

Տվյալ դեպքում 900.000 դրամը վաճառված Ավտոմեքենայի իրական գինն է, քանի որ նույն թվականի և մակնիշի չվթարված ավտոմեքենայի շուկայական արժեքը կազմում է մոտավորապես 6000-7000 ԱՄՆ դոլար:

Հաշվի առնելով վերը նշվածը գանգատաբերը խնդրում է հիմք ընդունել Վահագն Սիմոնյանի երկրորդ հայտարարությունը և անվավեր ճանաչել Կենտրոնի հարկային տեսչության պետի 17.02.2015թ. թիվ 201 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Պարզև Շահբազյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 12.02.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 843.169 դրամ, այդ թվում՝ ապառք 430.408 դրամ, տույժ 132.996 դրամ, տուգանք 279.765 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից 17.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 201 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Պարզև Շահբազյանից 843.169 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել քաղաքացի Պարզև Շահբազյանի վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն գանգատին:

Արդյունքում Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով, 07.04.2015 թ-ին ընդունել է թիվ 13/2 որոշումը Պարզև Շահբազյանի 17.03.2015 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնելու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 29.06.2015 թ-ի թիվ 13/13-1/866142-15 գրությամբ Հանձնաժողովին են ուղարկվել Պարզև Շահբազյանի վերաբերյալ նյութերը, որոնք հիմք են հանդիսանում Հանձնաժողովի 07.04.2015 թ-ի թիվ 13/2 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսելու համար:

Ուղարկված նյութերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Պարզև Շահբազյանի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 201 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ:

Քաղաքացի Պարզև Շահբազյանի կողմից Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել «Honda CRV» մակնիշի 2003թ. վթարված ավտոմեքենա: Վերջինս վթարված վիճակում ներմուծվելու հանգամանքը արտացոլված է նաև ներմուծման ժամանակ կազմված 20.02.2014 թ-ի հայտարարագրում: Ընդ որում, 20.02.2014 թ-ի հայտարարագրի համաձայն ավտոմեքենայի մաքսային արժեքը կազմել է 865.599 դրամ:

Նշված Ավտոմեքենայի վթարվածության աստիճանը, ավտոմեքենայի նորմալ շահագործողական վիճակի բերելու համար անհրաժեշտ մասերի ու աշխատանքների շուկայական արժեքը պարզելու համար Հայաստանի Հանրապետության «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կատարվել է փորձաքննություն:

Կատարված փորձաքննության արդյունքում կազմվել է Հմ 04761410 փորձագետի եզրակացությունը, որի համաձայն Ավտոմեքենայի վնասվածքների և դրանց պատճառով առաջացած խախտումների հետևանքով, այդ ավտոմեքենայի վերականգման, նորմալ շահագործողական վիճակի բերելու համար ծախսերի չափն՝ արժեքային արտահայտությամբ, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել 2.085.200 դրամ:

Բացի այդ, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից իրականացված գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցներով ևս հիմնավորվել է, որ վերագրյալ ավտոմեքենան Պարզև Շահբազյանը Վահագն Սիմոնյանին վաճառել է վթարված վիճակում: Հիմնավորվել է նաև այն հանգամանքը, որ Վահագն Սիմոնյանը Պարզև

Շահբազյանից ավտոմեքենան ձեռք է բերել ոչ թե 9000 ԱՄՆ դոլարով, այլ 900.000 ՀՀ դրամով: Մասնավորապես, Վահագն Սիմոնյանը 22.06.2015 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության աշխատակից Ա.Պետրոսյանին տվել է հայտարարություն այն մասին, որ 05.05.2014 թ-ին Պարզև Շահբազյանից գնել է «Honda CRV» մակնիշի ավտոմեքենա վթարված վիճակում, որի դիմաց Պարզև Շահբազյանին վճարել է 900.000 դրամ: 22.06.2015 թ-ի հայտարարությունում Վահագն Սիմոնյանը նշել է նաև, որ իր նախորդ հայտարարության մեջ նշվածը, որ ավտոմեքենան ձեռք է բերել 9000 դոլարով, չի համապատասխանում իրականությանը: Այսպես, քանի որ ավտոմեքենայի վերանորոգման համար ծախսվել է մոտավորապես 7000 ԱՄՆ դոլար, ուստի իր նախորդ հայտարարությունում նշել է, որ ավտոմեքենան ձեռք է բերել 9000 դոլարով:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ սույն գործում այլ ապացույցներ, որոնք կհիմնավորեին «Honda CRV» մակնիշի ավտոմեքենան Պարզև Շահբազյանի կողմից 900.000 դրամից ավել գնով վաճառված լինելու հանգամանքը, առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Պարզև Շահբազյանի վերոգրյալ ավտոմեքենայի վաճառքից առաջացող հարկային պարտավորությունները հաշվարկելիս որպես ավտոմեքենայի վաճառքի գին անհրաժեշտ է հիմք ընդունել 900.000 դրամը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման Հանձնաժողովի 07.04.2015 թ-ի թիվ 13/2 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:

2. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 201 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

